ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՍՐՈՊԻ

Անցեալ սեպտեմբեր ամսոյ 30ին, ինչպէս հրատարակած էր թէ Արարատ ամսագրում և թէ այլ պարբերական հրատարակութեանց մէջ, տեղի ունեցաւ Մայր Աթոռում ամենանշանաւոր ազգային եկեղեցական հանդէսն, այն է սրբալոյս Մեսրոպի օրհնութիւնը, որպիսին ոչ մի քրիստոնեայ եկեղեցի չունի: Ազգային է այս հանդէսը, որովհետև ամբողջ հայ ազգի համար նա մեծ է և սուրբ և չունի տեղական տօնախմբութեան կերպարանք, այլ համազգային է, որովհետև չէ կատարուում որևէ գաւառի կամ նահանգի ազգայնոց ներկայութեամբ, այլ միշտ գրեթէ ամեն տեղերից հայ ազգի անդամք ներկայ են գտանվում այդ մեծ եկեղեցական առանձին աստուածային առանձնաշնորհութեան հանդիսին: Այն կերպարանքը կրում էր վերոյիշեալ հանդէսը և 30ին սեպտեմբերի ներկայ տարի: Ուխտաւորաց բազմութիւնն այս անգամ շատ մեծ էր: Թէև դժուար է թիւը ճշտութեամբ որոշելը, բայց ըստ երևութին նա պէտք է 20,000ից աւելի լինէր: Ոչ միայն Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի հայ հասարակութիւնք ունէին իրանց ներկայացուցիչներն այստեղ, այլ և Ռումանիայից Բուլղարիայից և Ջաւայ կղզուց էլ կային ներկայացուցիչք հայ գաղթականութեանց:

Հանդէսը սկսաւ շաբաթ երեկոյին. այդ օրը կէս օրից յետ ժամը 4ին Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր կերպով իջաւ Ս. Տաճարը: Երբ Նորին Օծութիւնը դուրս եկաւ Վեհարանից, արդէն բոլոր եկեղեցական դասը դարպասի առաջ շուրջառագեստ, խաչերով ու խաչուառներով, երգեցիկ խմբով հանդերձ, սպասում էր: Նորին Օծութիւնը մտաւ ամսկհովանու ներքոյ և հանդիսականք սկսան շարժել դէպի եկեղեցին: Մայր Տաճարի բակը և շրջապատող շինութեանց տանիքները լիքն էին բազմութեամբ, Նորին Օծութիւնը աջ և ձախ շարունակ խաչակնքում էր: Ոչ երգեցիկ խմբի ձայնն և ոչ էլ երաժշտութեանը լսվում էր, որովհետև ժողովրդեան կեցցէների ձայնը թնդացնում էր օդը: Երեկոյեան և առաւօտեան ժամերգութիւնը վերջացնելից յետ, Նորին Օծութիւնը նոյն հանդիսով վերադարձաւ Վեհարան: Ար-

դէն մութն էր և դարձի հանդէսը լուսաւորում էր Մայր Աթոռիս գրադարանի տանիքից ելեքտրական արեգակը. տեսարանը շատ գեղեցիկ էր, քանի որ ներկայ գտանվող ժողովուրդը ներկայացնում էր գոյնզգոյն բազմութիւն, ժողված աշխարհիս ամէն ծայրերից։ Ամբողջ գիշեր տեղական երաժշտութեանց և երգերի ձայները լսելի էին։ Ոչ միայն եկեղեցու և մերձակայ բակերը լիքն էին բազմութեամբ, այլ և արտաքոյ Տաճարի պարիսպների բոլոր շրջապատն և հրապարակները բռնած էին ուխտաւորները, որոնց մեծ մասը տեղաւորուած էր բացօթեայ սայլերի, կառքերի և վրանների տակ։

Միւս օրը կիրակի առաւօտը պատարագից առաջ ըստ կարգադրութեան Նորին Օծութեան հեռաւոր տեղերից եկած ուխտաւորներին ժամասացութիւնից առաջ մոցրին եկեղեցին և տեղաւորեցին այնպէս որ նոքա կարողանան տեսնել օրհնութեան հանդէսը։

8 ժամին Վեհարանից Նորին Օծութիւնը զգեստաւորուած՝ նոյնպէս և տասն երկու եպիսկոպոսունք՝ զգեստաւորուած ունելով իրանց ձեռքերին Ս. մասունքներ՝ այն է Ս. Դեղարդը, Կենաց փայտը, Ս. Լուսաւորչի աջը և այլն, նոյնպէս հին միւռոնը, ծաղկանց հիւթը, բալասանը, իջան Վեհարանից։ Նորին Օծութիւնը մտաւ ավագհովանու ներքոյ, երգեցիկ խումբը սկսեց երգել «Փորհուրդ խորին» երգը. և բոլոր հանդիսականք սկսան առաջ երթալ դէպի Տաճարը։ Թէ բակը և թէ շրջակայ շինուածոց տանիքները լիքն էին բազմութեամբ։ Բազմութեան կեցցէների ձայնը անընդհատ շարունակուում էր, մինչև եկեղեցական դասը մտաւ Ս. Տաճարը, որ իսկոյն լցուեցաւ բազմութեամբ։ Սկսաւ պատարագը։ Պատարագիչն էր Նորին Օծութիւնը։

Ս. Միւռոնի օրհնութեան կարգը աւարտելից և պատարագը վերջացնելից յետ եկեղեցական հանդիսականք նոյն կարգով վերադարձան Վեհարան՝ և ուխտաւորաց բազմութիւնը մեծ ջերմեռանդութեամբ սկսաւ Ս. Միւռոնի կատսան համբուրել, որ երեք օր շարունակուեցաւ, առաւօտից մինչև ուշ գիշերը։ Հարիւրաւոր բարձրաստիճան պաշտօնէից և պատուաւոր ուխտաւորաց համար Վեհարանում պատրաստած էր այդ օր ճոխ սեղան, բացի հասարակաց սեղանից, ուր մի քանի հարիւրաւոր անձինք ճաշ վայելեցին։ Ժողովրդական ուրախութիւնք շարունակուեցան։ Երեք-

շաբթի ուխտաւորաց համար Ս. մասունք դուրս բերուեցան: Նոյն օրը Նորին Օծութիւնը ընդունեց ուխտաւորներին և օրհնեց նրանց:

Կարգապահութեան համար Երևանից եկած էին մի վաշտ զինուորներ, 100 հոգի հայ զինուորք և 100 կոզակներ իրանց սպաներով: Ճրագալուցին փոխարինում էր արհեստական արեգակը, որոյ սարքողն էր ձեմարանի ֆիզիքայի ուսուցիչ պ. Խօջայեանցն իսկ նուիրողներն էին մեծ. եղբարք պ. պ. Ժամհարեանք:

Սեպտեմբերի 29 ին տօնուեցաւ հանդիսաւոր կերպով Մայր Աթոռոյս ձեմարանի 16-րդ տարեդարձն, որոյ մասին առաջիկայ համարում կխօսենք: